Հավելված N 28
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի
2023 թվականի նոյեմբերի 15-ի N 116-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) փորձաքննության և վերլուծությունների վարչության (այսուհետ՝ Վարչություն) հետբուհական կրթության որակի ապահովման բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիր՝ 18-4-28.2-Ղ4-3)

1.2 Ենթակա և հաշվետու է
Բաժին պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ
Բաժին պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5 Աշխատավայրը
Հայաստան, ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Օրբելի եղբայրների 22

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) ապահովում է աստիճանաշնորհման և գիտական կոչումների որակավորման գործերի ուսումնասիրման և ըստ արդյունքի համապատասխան եզրակացություններ ներկայացնելու աշխատանքները.

2) ապահովում է գիտությունների թեկնածուներին ատենախոսությունների գիտական ղեկավար նշանակելու թույլտվության գործընթացի իրականացումը.

3) ապահովում է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծմանը, վերակազմավորմանը և լուծարմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.

4) ապահովում է Բաժնի մասնակցությունը գիտական աստիճանաշնորհման

համակարգի և գիտական ու գիտակրթական կադրերի որակավորման պետական չափանիշների մշակման աշխատանքներին, ապահովում է համապատասխան միջազգային փորձի ուսումնասիրության աշխատանքները.

5) ապահովում է Բաժնի մասնակցությունը գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգերի և չափանիշների մշակման, գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների աշխատանքի կանոնակարգի մշակման աշխատանքներին.

6) ապահովում է ատենախոսության պաշտպանության համար անհրաժեշտ որակավորման քննությունների ծրագրերի հաստատման աշխատանքները.

7) ապահովում է օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերը Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերին համապատասխանեցման որակավորման գործերի ուսումնասիրման և ըստ արդյունքի համապատասխան եզրակացություն ներկայացնելու աշխատանքները.

8) ապահովում է որակավորման մասնագիտական քննությունների հանձնաժողովների կազմերի ձևավորման աշխատանքները.

9) ապահովում է Բաժնի մասնակցությունը գիտական աստիճաններ և գիտական կոչումներ շնորհող գիտական մասնագիտությունների անվանացանկի կազմման աշխատանքներին:

Իրավունքները՝

1) ուսումնասիրել որակավորման փաստաթղթերը, մասնագիտական խորհուրդներից, բուհերից, գիտական կազմակերպություններից ստացված պարզաբանումները, անհրաժեշտության դեպքում՝ պահանջել լրացուցիչ տեղեկատվություն, փաստաթղթեր, կազմակերպել քննարկումներ.

2) ուսունասիրել գիտական ղեկավար նշանակելու թույլտվության համար միջնորդություն ներկայացրած գիտական կազմակերպությունից ստացված համապատասխան բնագավառների գիտությունների թեկնածուների գիտական աշխատանքների ցանկը, անհրաժեշտության դեպքում դիմել լրացուցիչ տեղեկություններ, պարզաբանումներ ստանալու համար.

3) բուհերից և գիտական կազմակերպություններից պահանջել և ստանալ համապատասխան բնագավառների մասնագիտական խորհուրդների անդամների մասին տեղեկություններ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծմանը, վերակազմավորմանը և լուծարմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները ապահովելու համար, կազմակերպել հանդիպումներ խորհուրդների ներկայացուցիչների հետ.

4) ներկայացնել առաջարկություններ ատենախոսությունների արդյունքների ու դրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների չափանիշների և ցուցակի վերաբերյալ, հարցումներ կատարել միջազգային համապատասխան մարմիններ,

ծանոթանալ ստացված տեղեկատվությանը, մասնակցել փոխայցելություններին.

5) մասնակցել գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգերի և չափանիշների մշակման, գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների աշխատանքի կանոնակարգի մշակման վերաբերյալ քննարկումներին, ներկայացնել առաջարկություններ.

6) բուհերից, գիտական կազմակերպություններից պահանջել և ստանալ գիտությունների համապատասխան բնագավառներով ատենախոսության պաշտպանության համար անհրաժեշտ որակավորման քննությունների ծրագրերի մշակված տարբերակները

7) ուսումնասիրել բուհերից և գիտական կազմակերպություններից որակավորման քննությունների հանձնաժողովների կազմում ընդգրկվող անդամների մասին տվյալները:

Պարտականությունները՝

1) ուսումնասիրել որակավորման փաստաթղթերը, ստուգել դրանց համապատասխանությունը գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին, ինչպես նաև գիտական և գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի կոչումներ շնորհելու կարգի պահանջներին, սահմանված ժամկետներում ապահովել Բաժնի աշխատողների կողմից հաստատման ներկայացվող գործերի վերաբերյալ եզրակացություններ նախապատրաստելու աշխատանքները.

2) սահմանված ժամկետներում ընթաք տալ համապատասխան բնագավառների գիտությունների թեկնածուների գիտական աշխատանքների ցանկերի ուսումնասիրման, կանոնակարգի պահանջներին դրանց համապատասխանության ստուգման, պատասխան գրություններ նախապատրաստելու աշխատանքներին.

3) վերահսկել սահմանված ժամկետներում համապատասխան բնագավառների մասնագիտական խորհուրդների ստեղծման, վերակազմավորման, լուծարման վերաբերյալ հրամանների նախագծերի նախապատրաստման և դրանք հաստատման ներկայացնելու աշխատանքները.

4) ուսումնասիրել գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական չափանիշների մշակման համար Բաժնի աշխատողների կողմից կատարված միջազգային փորձի վերլուծությունները, ամփոփել և Վարչության պետին ներկայացնել առաջարկություններ.

5) ուսումնասիրել գիտական աստիճանաշնորհման և գիտական կոչումների շնորհման, գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների աշխատանքի կանոնակարգերի նախագծերի վերաբերյալ բուհերից և գիտական կազմակերպություններից ստացված առաջարկությունները և դիտողությունները, ըստ անհրաժեշտության ներկայացնել առաջարկություններ դրանց վերաբերյալ.

6) օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանների և կոչումների վկայագրերի (դիպլոմների) համապատասխանեցման գործընթացը ապահովելու համար ուսումնասիրել որակավորման գործերը, ապահովել հաստատման ներկայացվող գործի

վերաբերյալ եզրակացությունների նախապատրաստման աշխատանները.

7) ստուգել բուհերից, գիտական կազմակերպություններից ներկայացված գիտությունների համապատասխան բնագավառներով ատենախոսության պաշտպանության համար անհրաժեշտ որակավորման քննությունների ծրագրերը.

8) ուսումնասիրել համապատասխան մասնագետներից, գիտական հաստատությունների ներկայացուցիչներից ստացված առաջարկությունները գիտական աստիճանաշնորհման մասնագիտությունների անվանացանկի կազմման համար.

9) ուսումնասիրել Բաժնի գործառույթները կանոնակարգող և գործառույթների իրականացմանն առնչվող իրավական ակտերը և ներկայացնել համապատասխան առաջարկություններ կամ դիտարկումներ.

10) Բաժնի լիազորությունների շրջանակներում ամփոփել իրավական ակտերի նախագծերը, առաջարկությունները, տեղեկանքները, հաշվետվությունները, միջնորդագրերը, զեկուցագրերը և այլ գրություններ, կազմակերպել քննարկումներ, խորհրդակցություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գիտական և գիտատեխնիկական գործունեության կամ կրթության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները՝

1. Բանակցությունների վարում.
2. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն.
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում:

4. Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: